

« Բանդի մեզ էլ օժանդակ են աստուածները »  
 « Բանդի մեծ եմ ձեզնից տարիքով »  
 « Բանդի նա մեծարոյ է, և խօսքերին կարելի է հաւատալ »  
 « Բանդի, քանդի, քանդի . . . »

ԱՆԵԼ ՀԵՏ.

ԺԱ. Տե՛ս քեզ ինչ կանեմ, (Սպառնալիք) Ձե կարելի ասել, « Բեզ հեք ինչ կանեմ, Այլ է եթէ միասին գործելու մտքով ասուովէ, Բեզ հետ այս ինչ գործը կանեմ, այսինքն՝ քեզ հետ միասին,

« Այն ժամանակ Ալիսեմնեոտրան ասաց մարդուն, թէ նրանք արդէն դիտէին նրա անելիքն ուղիւն հետ, և զի . . . »

« Նրա անելիքն աղջկան կամ աղջկանը, Հետը բոլորովին աւելորդ է և ընդդէմ մեր շեղուի ոգուն, »

Այս սխալ խնդրառութիւնը Պ. Աարդանեանի թարգմանութեանց մէջ շատ հազիւ է պատահում, սակայն անհրաժեշտ թուեցաւ մեզ այս մասին նկատողութիւն անել, որովհետեւ շատ ուրիշ գրողներ նոյն սխալը չափից դուրս՝ սովորութիւն դարձնելու չափ, կրկնու մեն են ամեն օր,

(Շ-չ-ն-ի-է)

Միտքան.

Ն Ա Յ Ե Մ Բ Ե Ղ Ա Մ Ի Ս.

- Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,
- Մոռացան մարդիկ՝ ամուսն ամիսներ.
- Աոյտ կոյտ դիզուեցին թխագոյն ամպեր,
- Փշեցին սաստիկ՝ ցրտաշունչ հողմեր.
- Մերկացան անտառք՝ չորացան բոյսեր,
- Ի դերև ելան շատ և շատ յոյսեր,
- Սարեր ու ձորեր՝ ամայի, թափուր,
- Ջրկուել են զարդից, տրտում են տխուր.
- Դաշտերն էլ իրանց փայլը կորցրած՝
- Կանաչ գոյնի տեղ՝ դեղին են հագած.
- Սարսափդ տիրեց՝ երկրին Նոյեմբեր,
- Եկան ու հասան ձիւնաբեր օրեր,
- Հովիտ, բլուրներ կանաչից զրկուած,
- Հովիւն իւր սրինգն ու երգը թողած.
- Գլխակոր տրտում հօտի ետևից
- Հաապուով տուն՝ խամրած դաշտերից.

Էլ չեն երևում սոյլ ու գաւթաններ՝

Եւ էլ չեն լսում մաճկալի երգեր.

Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,

Քեզնից զարհուրած՝ ամենքն են լսել:

Այդքն ամայի, արտերը թափուր,

Ժիր երկրագործներն ո՞ւր գնացին, ո՞ւր:

Մշակը դաշտին, այգեպանն այգուն,

Ցաւերն յիշելով՝ աւա՛ղ են կարգում.

Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,

Չեն գործում այլ ևս՝ գործունեայ ձևեր:

Պաղատու լինին և թէ անպտուղ

Ծառերը կրում են տերեւթափ ճիւղ.

Ամենքն էլ մերկ են ու անշուք կանգնած՝

Կատալի քամուն խաղալիք դարձած.

Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,

Վերացան երկրից բերք ու բարկերն:

Մանուկներն անգամ սարսուռ են զգում,

Երբ քո՛ Նոյեմբեր, անունդ են լսում.

Զրկում են խեղճերն մանկական խաղից,

Չեն ուզում դուրս գալ՝ ծնողաց գրկից.

Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,

Բոյն են շտապում՝ սպասն, թաշուններ:

Էլ հարս, աղջիկներ դաշտ չեն այցելում,

Եւ ոչ էլ իրանց պարզ խաղն են խաղում.

Տղայքն էլ կարծես՝ տխուր ու տրտում,

Փակուած են անել ու մութը բանտում.

Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,

Հեռացան մեզնից կենսատու օրեր:

Միայն ծերունիք անցեալից փորձուած,

Այսպէս Նոյեմբեր որ շատ են տեսած,

Խոստանում են մեզ և յոյս են տալիս,

Որ տեսնելու ենք մենք Նորից Մայիս.

Եւ այն ժամանակ ամենքս էլ ուրախ՝

Կսկսենք ցնծալ աներկիւղ անխախտ

Դաշտ կերթանք բոլորս սպայձառ ժպտով՝

Մեզ Մայիս բերող՝ Տիրոջ փառք տալով:

Վրաշար Ներսէս Տէր—Աւետիքեանց.